2005 թ. Զեկույց

«Օգնել երեխաներին» նախագիծը սկիզբ առավ, երբ այն պաշտոնապես հաստատվեց ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Ապահովության նախարարության կողմից: Այն ժամանակ նախագծի կազմում ընդգրկված էին ընդամենը երեսուն կամավոր: Ծրագրի հիմնական նպատակն է միավորել Հայաստանում գրանցված բոլոր մանկատները մեկ ընդհանուր կրթական մեծ ցանցի մեջ:
Սկզբնական ժամանակաշրջանում ծրագիրը ծանրակշիռ խոչընդոտների հանդիպեց: Ճիշտ է, կար մեծ ցանկություն և լուրջ շարժառիթ ծրագրի հիմնական նպատակն իրականության վերածելու ամեն գնով, սակայն հկ-ն չուներ ոչ գրասենյակ և ոչ էլ ֆինանսական միջոցներ: Սակայն այն ուներ թիմի գաղափար, կամավորների մի խումբ, ովքեր կողք-կողքի կանգնած կանխեցին ծրագրի փլուզումը: Այսպիսով, ծրագիրն արդեն իրականություն էր շնորհիվ կամավորների կողմից ցուցաբերած նվիրումի և ստեղծված առողջ մթնոլորտի: Չնայած այն հանգամանքին, որ ծրագիրը չուներ ոչ մի հովանավոր, սկզբնավորման առաջին իսկ տարում այն ունեցավ ձեռքբերումներ, ինչպիսիք են Հայերենի, Ռուսերենի, Անգլերենի և Հոգևոր դասերի անցկացումը մանկատների և հատուկ դպրոցների երեխաների համար:

Ծրագիրը հնարավորություն ընձեռեց մանկատների երեխաներին արտահայտել իրենց տաղանդը Մշակույթի Տանն անցկացված միջոցառման շրջանակներում: Այնտեղ երեխաները երգեցին, պարեցին, բեմականացում ներկայացրեցին և վերջում ցուցադրվեցին իրենց իսկ ձեռքի աշխատանքները: Ուսումնական պարապմունքներն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով, ուսումնական ծրագրերի համար պատասխանատու կամավորների կազմը, անընդհատ մշակում էին նոր, ավելի արդյունավետ եղանակներ, որպեսզի պարապմունքները լինեն ավելի ինտերակտիվ և հետաքրքիր: Վերը նշվածի մասին է վկայում հայերենի պարապմունքը բնության գրկում, որի ժամանակ երեխաները մեծ ներշնչանքով ծանոթացան Վահան Տերյանի պոեզիային:

Գնալով ընդառաջ հկ-ի նպատակներից ևս մեկի իրականացմանը, այն է՝ խթանել երեխաների սոցիալականացման և ճանաչողական ունակությունների գործընթացները, «Ապագան բաց է» հկ-ն կազմակերպեց մի շարք միջոցառումներ՝ այցեր թանգարաններ, թատրոններ, Գրանդ Քենդի և Սվիթլենդ գործարաններ: Վերջին գործարանում երեխաներին բաժանվեցին մանրադրամներ, որոնցով նրանք պետք է քաղցրավենիք գնեին գործարանում: Այս ակցիայի անցկացման նպատակն էր՝ սովորեցնել երեխաներին, որ եթե որևէ իր են ցանկանում ձեռք բերել, պետք է վճարել դրա համար, որպեսզի մուրալը և ինչ-որ բան անվճար ձեռքբերելը սովորություն չդառնա իրենց մոտ:: 2005 թվականն ամփոփվեց մանկատներ այցերով: Անձնակազմը շնորհավորեց երեխաների, մանկատան աշխատակիցների Ամանորը և Սուրբ Ծնունդը՝ փոխադարձաբար քաջալերելով միմյանց կատարած բարեխիղճ աշխատանքի և անձնվերության համար: